



ՄԱՍԻՍ



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

517 ՏԱՐԻ, ԹԻ 2

(ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

12 ՅՈՒՆԻՍԻԱՐ 1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ ՇՈՒՐՋԸ	Տ. Ս.
ՄԵՐԺՈՒՄԸ (ՆՈՐԱՎԷՅ)	ՅՈՎՀ. ՍԵԹԵԱՆ
ԿԷՍ-ԲԺՇԿԱԿԱՆ. 1902ի կաղանդչէք	ՏՈՔԹ. Յ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ՆԵՐՇՆՁՈՒՄԸ (Իմաստասիրական խոհեր)	ՀԱՐՄԱԿ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	
ՍԷՐ թե երազ	Վ. ՄԱԼԷՋԵԱՆ
Մոռացոմ	Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ. «Cassel's Magazine» Անգլ.	
Հանդեսն քաղուած	Վ. Ա. Գ.
ՅՈՒՇԱՏԵՐ	

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ ղրԵ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթաստացիական ծախքը խմբագրութեան իրայ է: Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: Մասիս հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչե-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոյ:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍԵՒ

ՀԱՍՑԷ

دورعلیه ده غلعه ده «مسیس» غرضی اداره می

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորաստուկեան իւան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople



ՌՕՍԻԱ — ROSSIA

Ա. ՊԱՆՈՎ Ա. ԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ

34,775,642 *Primes*

Երաշխաւորութեան գումար

121,765,333

1881-ին ի վեր տպահովագրեալներուն վճարուած

164,172,000


Կեղրոնաւելի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մաքաւսան հին տեղը

ՀԱՊԻ. ԲԵՆԻՅ

ՀԱՅԿ. ԻՌԵՄԻԱՅԱՆ

ሀ. ረኮሮሆኮደ

ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵԷՆ



Անկարբիւի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է՝
Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ሀ ት ሄ ደ

մեքենան լաւագոյնն է . սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը , հաստատունը եւ գլխաւորած ելին ըլլալուն բովանդակ՝ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սիւնկերի մեքենաները կը գնէ :

Ջեռփի, ոսփի եւ ձեռփի ու ոսփի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

ՍԻՆԿԵՐԻ /ԴԵՔԵՆԱՆԵՐԸ/ ԿԸ ՑԱՐԱՐԻՆ, ՎԻՎԵԵՅԻ ՍԻՆԿԵՐ ԸՆԿԵՐՈՑԵԱՆ, ՎԱՃԱՌԱՎԱՐՈՒՄԻ ՄԱՆԿԱԿԱՆՈՒՄԸ՝

ԲԵՐԱ , ՄԵԾ-ՓՈԴՈՅ , ԿԱԼԱԹԱ ՍԷՐԱՅԻ ԼԻԱԷԻՆ ՂԻՎԱՅ .

ԿԱԼԱԹԱ { 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամուէլյին կայարանին Դիմաց .

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ .
2. Սուլթան Պէյազիտ .

Դասերը եւ ցորոգուծիւնք ձրի .

Կատարեալ երաշխանորթիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր հաղաւթներուն մէջ

ՄԱՍԻԱՆՔԱՌԻՄԵՆ

ՄԱՍԻՍ

51^{րդ} ՏԱՐԻ

— 12 ՅՈՒՆՈՒԱՐ 1902 —

ԹԻՒ 2

ԳՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄԻՆ ՇՈՒՐՋԸ

Վահան Յարութիւնեան, կրտսեր մը, եւ Յովհաննէս Սեթեան, երէց մը, գրականութեան մէջ, իրենց նորավէպներովը առաջնութիւն ստանալով Մաւխի Գրական Մրցումին մասնակցող երտուններէն գրողներուն մէջէն, օրուան ուշադրութեան առարկայ կը դառնան ինչպէս Պոլսոյ, նոյնպէս թերեւս գաւառի գրասիրական շրջանակներուն մէջ որոնք հետաքրքրուեցան այս Մրցումովը:

Յովհաննէս Սեթեան, իր անձովը, այնքան ծանօթ է այստեղ, ուր ծնած, մեծցած եւ ուսուցչութեամբ ու գրչի աշխատութիւններով պարապած է երկար տարիներ, որքան անձնապէս անձանօթ է Վահան Յարութիւնեան որ Պոլիս ուր կոխած չէ կարծեմ: Բայց երկուքն ալ, իրենց գրուածքներովը, հաւասարապէս «ճանչուող դէմքեր» կրնան սեպուիլ մեր հասարակութեան գրասէր մասին համար: Ծերուկին խղճահարութիւնը հեղինակը, համեմատապէս քիչ րան արտադրած է քան Մերժուելին հեղինակը, եւ երկուքն ալ իրենց ոճովը, նիւթերովը, գրական հակումներովը՝ տարբեր գիծերու վրայ կը զբաղուին: Վահան Յարութիւնեան, բնիկ Մաւխարացի, իր գաւառային անկիւնէն հետեւող մը եղած է կանուխէն Պոլսոյ գրականութեան ու լրագրութեան, մշակելով եւրոպականն ալ իր ճոխ պէսպիսութեանցը մէջ ուսկից կընդունինք մեր մտքի պաշարը: Տարին քանի մը անգամ իր ստորագրութիւնը կ'երեւայ Պոլսոյ Հանդէսի մը կամ Օրաթերթի մը մէջ, ընդ-

հանրապէս գաւառի կեանքէ քաղուած պատկերով մը, — զգայուն, ապրուած պատկեր մը, եթէ կարելի է այսպէս ըսել, որ իր երանգներուն հարազատութեամբը, իր ուրուագիծներուն յստակութեամբը՝ իրականութիւնը կը դնէ ընթերցողին աչքին առջեւ: Նկարագրութիւններ ունի որոնք լնութենէն «լուսանկարուած» ըլլալ կը կարծուին, — գիւղի կեանքի, դաշտի ու լեռան, հիւղակի ու առուակի նկարագրութիւններ, մեղմ, փափուկ վրձինով մը յանձնուած թուղթին, որոնք տոհմային գրականութեան գրոշմը կը կրեն:

Յովհաննէս Սեթեան, ամէնէն աւելի Շէքսպիրով ու Պայրընով սնած, միսթիք գրող մըն է, առանց բնաւ իրեն մասնաւոր սեռ մը ընտրած ըլլալու գրականութեան մէջ, եւ ամէնքն ալ քիչ շատ փորձած: Իր արձակին ինչպէս ոտանաւորին մէջ, դառնութիւն մը, մեղա մաղձութիւն մը կայ միշտ, որ արհեստական չէ բնաւ, — բնածին մեղամաղձութիւն մը, իր անձէն ալ անբաժան, մանկութենէն ի վեր՝ զոր արտում տխուր անցուցած է Օրթագիւղ, կանուխէն սրբ մնացած:

Իր բանաստեղծութեանց տպագիր հատորը չա՛տ հին է արդէն՝ վրան խօսելու համար, եւ իր նորագոյն հրատարակութիւնը կրնայ նկատուիլ 1898-99ի Արեւելիներուն մէջ՝ Ֆրանսայի լաւագոյն հեղինակներէն թարգմանութիւններ որոնք գրական գողտրիկ թերթօններ կազմեցին: Մաւխի մէջ, իր «առաջին հրատարակութեան» յիշատակը միայն ունեցանք, եւ ոտանաւոր մը:

Չեմ գիտեր թէ այս հակիրճ ուրուագիծը նոր բան մը կ'աւելցունէ՞ Վ. Յարութիւնեանի եւ Յ. Սեթեանի մասին ընթերցող հասարակութեան արդէն իսկ կազմած գաղափարին ու գիտցածին վրայ : Բայց առիթը յարմար էր ներկայացնելու առաջինը , — նոր մը — հիներուն , եւ երկրորդը , — հին մը — նորերուն , — քանի որ «նորի ու հինի» խնդիրը դեռ գոցուած չէ մեր գրողներուն համար , ու ասոնց ատեն ծայր կուտայ լրագրութեան մէջ :

Քանի մը տող ալ բուն իսկ Գրական Մըրցումին վրայ զոր ունանք , — սխալ ըմբռնումով մը , — յանգած տեսնել կուզէին արդիւնքի մը որ վիպական հրաշակերտ մը արտադրէր , ինչպէս վաղը միւս օր՝ երբ ոտանաւորի մըրցումը հաստատենք՝ պիտի ուզեն անստգիւտ բանաստեղծութիւն մը առաջին հռչակուած տեսնել : Այս տեսակ մրցումներուն բուն նպատակը՝ նախափորձերը քաջալերել է , եւ Եւ-

րոպական մամուլին մէջ , — ուր ահագին համատարածութիւններու կը հասնին անոնք , — օրուան գրողները՝ վարպետները չէ որ կը մասնակցին , այլ անոնք որ մասնաւոր հակում մը ու կարողութիւն կը զգան առաջարկուած ճիւղը մշակելու եւ գրականութեան մէջ իրենց սիրելիական բաժինը ընելու : Երեւակայեցէք որ Ժուռնալ թերթը նորաովէպի մրցում մը բացած է որուն համար երկու ամսուան միջոյի մը մէջ զրկուած ձեռագիրներուն թիւը կը հասնի . . . հինգ հազարի : Եւ խմբագրութիւնը , յայտարարելով թէ չուարած կը մնայ նորաովէպերու այս յորդումին տողեւ , քննութեան համար որոշուած պայմանաժամը երկարաձգելու հարկին մէջ կը գտնուի : Ապահովապէս , այդ հինգ-հազարէ աւելի մասնակցողներուն մէջ չպիտի գտնուի՝ արդէն իսկ վիպագրի համբաւ չինած ֆրանսացի գրագէտ մը :

Տ. Ա.

ՍԷՐ ԹԵ ԵՐԱՅ

Քեզի համար չունիմ տեսչեր որ կ'այրեն ,
Չունիմ եեզի համար խրոսով մեղաւոր :
Սէր քե երազ , լաւ չեմ գիտեր . բայց վերեմ
Կո՛ւ գայ յարգանքս՝ նախանշի մը պէս աղուոր :

Լըբուած սրբին մեհուրեան մեջ մեղմօրէն ,
Կ'արթըննայ ձայնդ՝ երկնային երգ մեղրածոր ,
Եւ կը քըւի խոստովանիլ համօրէն
Ըզգամունքներդ՝ քաբուն պահուած մինչ այսօր :

Կարծես երկուքս ալ սիրած ենք մեկըզմեկ՝
Յանգէս , առանց նիգի , եւ նոյն բընագողով :
Խորհի՛լ նոյն բանն , ու չի յայտնել ան երբեք :

Վաղուց ճանչցայ սիրոյ ճանոյթն ու վըրդով . . .
Բայց դուն ինձի երազ-սէրը ճանչցուցիր :
Դուն ցոյց կու տաս երկնի ճամբան լուսածիր :

ՎԱՀԱՆ ՍԱԼԷՋԵԱՆ

Մ Ե Ր Ժ Ո Ւ Մ Ը⁽¹⁾

(Ն Ո Ր Ա Վ Է Պ)

Այն իրիկունը Գրիգոր աղա սովորականէն ալ քիչ մը աւելի կանուխ առն դարձած էր, 10ին չոգեհաւով :

Վաստիւրի Բ. * * գիւղը, ծովեղբիւրքին մօտ, ձախ կողմէն բաւական ընդարձակ պարտէզով տուն մը կը բնակէր :

Մովսէսայեայ գալարաւէտ գարատաւի մը վրայ, քանի մը աքաբաններու եւ քանի մը նարնջենիներու մէջտեղ դրուած կոյնին մէկ երկու նստարան, աթոռներ, սեղանիկ մը :

Տուն դասնալէն կէս ժամ վերջը, հոն նստած էր նստարանի մը վրայ, նարիկէն քաշելով, լուրջ գոհութեամբ եւ բանխմաց նայուածքով մը դիտելով շուրջը եղած բոյսերը, քանի մը քայլ անդին նորաբոյս բանջարեղէնները :

Մէկուն կը սպասէր կարծես :

Օդը մեղմ էր : Վերջացող գարնան անուշ իրիկունն էր : Տերեւներուն տակ թաքուն թռչուններ բնդհաս բախշներ կ'արձակէին : Մաքուր հողի, առողջ բուսականութեան եղի բոյս մը գետէնէ կը բխէր : Մօտերը կորիւն մը մէջէն հոսող ջրի ծորանի մը արծաթը պարտէզին մէջ կը պտտայտէր իր ջինջ ու դաշն չծծիւնը, նման մտերմաբար գողտնիք մը խտառվանոյ մէկու մը ձայնին, որ կ'աղաչէ :

Քիչ մը վերջը, տանտիրոջը ազգական կին մը, երկու դրացիներ եւ երկու ճերմակ շերտազգեհոտով գեղահաս աղջիկներ նստած էին Գրիգոր աղայի մօտ, որ այդ դրացիներէն մէկուն հետ նորա խաղալու սկսած էր, քէ շանը ծխելով :

Ծ. Խ. — Նախորդ քիւով խոստացած էինք հրատարակել նաև «Տրոփուն» ծածկանունը կրող նորավեպը, որ Մախիս հաստատած Գրական Մրցումին մեջ մրցանակ շահող նորավեպէն ո՛չ նուազ յաջող նկատուեցաւ Քննիչներուն կողմէ : Այդ նորավեպն էր Մերժումը, — Յովնանէս Սևեռանի կողմէ գրուած, — որ իրական կեանքի մէկէ աւելի ճշմարիտ պատկերներ կը պատկերակէ իր մէջ եւ որ տարակոյս բռնիք քէ ախարժով պիտի կարգացուի :

— Դեռ չեկա՞ւ հայրերնիդ, հարցուց Գրիգոր աղան :

— Ոչ դեռ, պատասխանեց աղջիկներէն մէկը :

— Ահա, կուգայ կոր, ըսաւ միւսը չարժում մը ընելով աթոռին վրայ :

— Օ՛, հրամանեցէք, Միհրան աղա, ըսին քանի մը արական եւ իգական ձայներ խառն :

— Այս իրիկուն կանուխի՞չ սկսե՞ր էք :

— Դասըդ չատկէ՞լ տալու համար քիչ մը կանուխ եկայ, եղաւ Գրիգոր աղային ըսել պատասխանը, մինչդեռ միւսները կը խնդային :

Դասը նարան էր, Գրիգոր աղա կը պարծենար ամէնուն իր ճարտարութեանը համար, եւ նոյն իսկ ծանր խօսքերով կը հասկցնէր զայն իր դրացիին, Միհրան աղային, որ ներգութեան մշտափոխութեամբ միայն ունէր անոր հեղինակաւորի յանձնապատասխանութեանը հանգէպ :

Քիչ մը վերջը, Գրիգոր աղային ամուսինը երեւցաւ, ծանր ծանր քաշելով, գոհութեան ժպիտով մը, եւ աղջիկներէն մէկը տիկինին եկած կողմը բան մը փնտռողի արագ նայուածք մը պտտուց :

— Արմենակը ուր է, հարցուց Գրիգոր աղա՝ ծխափողը բերէն պահ մը հանելով :

— Դիւր կը գրէ կոր :

— Նորէ՞ն մի, աս տղուն ալ գիրը կարգալը չի ըմբար :

Գրիգոր աղա վաթսուներ անցուցած մարդ մըն էր, հիմայ չուխայի վաճառական : Կանուխէն չուխան խանութպանի քով աչկերտ եղած, երկար տարիներու խնայողութեամբ քիչ մը ստակ ձեռք բերած եւ ինքնիրենը տոռաւորի սկսած էր շատ տարիներ առաջ : Չորս կամ հինգ խարդախեալ, բայց անհաւատալի ճարպիկութեամբ եւ դիւրաթեքութեամբ ոտանց փորձանքի կատարուած սնանկութիւններ այսօրուան բաւական մեծ իր հարստութեանը տէր ըրած էին զինքը :

Յաջողած էր : Իր յաջողութեան գաղաւթը խոր հաւատքի մը մէջ էր : Քառասուն երկար տարիներէ ի վեր հաստատօրէն կը հաւատար որ ճարպիկ եղողը զործր կը կարգադրէ, թէ միջոցներուն բաց կամ գոց գոյ-

նին , ապրիւրներուն աւելի կամ պակաս մաքուր բլլալուն աշտարակներն բնիլը խելք չէ , եթէ մարդ կ'ուզէ հանդիստ ճամբայ մը շինել իրեն մինչեւ գերեզման :

Այս սկզբունքով առաջնորդուած , քալած էր իր ճամբէն , առանց չորսդին նայելու : Անձնատ ու խելօք մարդու համբաւ ունէր : Յայտնի է որ այս բարի-անունին արժանի չէր , եւ նոյն իսկ առջի բերան զարմացած էր անոր վրայ : Բայց վերջը վերջը , յաջողած էր , ինչպէս մարդիկը , ինչպէս Աստուած , ինքզինքն ալ խորհլու :

Իրաւ , հետեւ հետեւ իմացեր էր որ իր անգգամ անանկութիւններուն հաղթ վարչեցուցած էր քանի մը սուր հասարակութիւններ , բայց ինչ կ'ըլլար , որ մը իր երեսին բան մը ըսող եղա՞ծ էր : Ուրեմն այսպէս պէտք էր որ ըլլար :

Ասկէ զտա , բնառնիքի բարի հայր մը : Կին մը եւ զաւակ մը , որուն քիչ մը արտասոյց ծախքերուն — գիրք գնելու , եւայլն — տուցեւ հաճոյակատարութիւն միայն ցոյց տուած էր , շատ անգամ , գրեթէ միշտ տունը՝ հիւր մը իր կամ կնոջը ազգականներէն : Տնտեսագէտ , խնայասէր մինչեւ սոկիներուն ծածր , ամենէն աւելի ապկ գիտցողը լուսագոյն պարէններուն ամենէն աման ծախսուած տեղը : Ոչ մէկը իրեն շատի գիտ էր թէ ամուսնի , վառելափայտի , կամ սոխի առագաստանաւերը ո՞ր թուականին կը սկսէին քաղաք բերել անոր ձմրան պաշարները :

Հանգիստ կեանք մը իրենը , միօրինակ , երկրաշտիօրէն գծուած : Զարաւղութիւն , բնա՛ւ : Ամառ , ձմեռ , գիւղի այդ տունը կը բնակէր : Աստուաները , աստուարին համար չուկայ չգացած , նաւամատոյցին մօտ սրճաբան մը նարկիլէն կը ծխէր ու խահուէն կը խմէր քանի մը բարեկամներու հետ , յետոյ չուկայ կ'ընէր : Իրիկունը , ամասր պարակը , ձմեռը տանը մէջ , դարձեալ նոյն բարեկամներուն հետ քանի մը զրօսալի ժամեր կ'անցունէր :

Բարեկամները , շատ սակաւ ամիւ իրաւ , եթէ նեղութիւն մը ունենային կամ դժուարութեան մը հանդիպէին , իրեն խորհուրդ կը հարցնէին : Լաւագոյն եւ արագագոյն դար-

մանը , եթէ դարման կար , կը ցուցնէր անոնց , զո՞հ կը մնային :

Ամէնէն զուարճալի պարագաներուն մէջ չէր խնդար : Ծիծաղաշարժ սրտմտութիւններ շատ ունէր , որոնք միւսներուն քրքիչ բանալ կուտային : Ինքը , չէր ժպտեր բնաւ , առ առաւելն , շրթունքին ձախ ծայրէն ծալք մը , դառն ծալք մը պիտի ըսէիր , ժպտի տեղ կերկարէր այտին վրայ : Եհա այսչափ : Ծատ հաւանական է որ զուարթութիւնը կանուխէն , շատ կանուխէն մարած էր իր հոգւոյն մէջ , այն ժամանակէն երբ իր վարպետին քովն էր , առաւօտէն մինչեւ իրիկուն ծաղապտտիկ նստած , յաճախորդի սպասելով , բնաւ չժպտելով՝ դժնէրարոյ ըլլալու աստիճան լուրջ տիրոջը ներկայութեանը , այն տէրէրէն որոնք իրենց ծառայողներուն բնաւ երես չէն տար՝ ապագային մէջ պատահականութիւնը հնարաւոր եղաւ դրամական զեղծումներու առաջը առնել կարծելով :

Միհրան աղային համար մասնաւոր բարեկամութիւն մը , պիտի ըսէի հոգածութիւն մը ունէր : Աստու իրիկուն միտսին կը տեսնէիր զիրենք : Ծոգեհաւին մէջ , սրճարանը , գիւղին չուկան , եկեղեցին — վասն զի կիրակի առաւուսները անվրէպ եկեղեցին կերթար — Գրիգոր աղան տեսնողը երկու քայլ անդին , կամ վայրկեան մը վերջը Միհրան աղան ալ անպատճառ պիտի նշմարէր քովն ի վեր , անոր չափին պէս :

Այս վերջինը յիսունը անցուցած պարզամիտ ու աշխու մարդ մըն էր : Մանկութենէն զգտաւ , աստուածավախ բնառնիքի մը ծոցը սնած , երիտասարդութեանը մէջ պարկեշտ եւ ուղղամիտ , գրեթէ սրբակրօն , կանուխ կանուխ կորսնցուցած էր իր սիրելիները , հայրը , մայրը , եղբայր մը եւ երկու քոյրեր :

Փոքրիկ դրամապաշտ մը թոյլ տուած էր իրեն՝ տուրեստի ձեռնարկելու : Ամուսնացած էր , սիրելով : Ամուսնութենէն անմիջապէս յետոյ , գործերը յաջող գացած էին , մինչեւ այն օրը որ իր կինը , իրեն երկու աղջիկ զաւակ տալէն ետքը , յաւիտեան բաժնուած էր իրմէ : Այդ օրէն , տաւը երկար տարիներէ ի վեր , գործերը երթալով աւելի ձախող ընթացք մը տուած էին : Կարծես թէ

կինը բախար հետք բերած եւ հետք առած տարած էր . ձախողութիւնները իրարու ետեւէ վազելով եկած գլխուն զարկած էին : Սնանկացած էր :

Նուազ ուղղամիտ , չպիտի իյնար : Իր մայրը , հարստաւ տնային հին տան մը պարտէզին մէջ տեսնուած մարմարէ արձանի մը քիչ մը հինցած անխալ սպիտակութեամբ զգաստ եւ առաքինի կին , որուն զգեստներէն միշտ խոսնակ հաս մը կը բուրէր . օր մը լսած էր իրեն , երբ ինքը երիտասարդ էր . «Տղան , գործիդ մէջ ողիւղ եղիր , երբեք ուրիշ իրաւունք մի՛ յախշտակեր » Այս բառերը Միհրանին՝ օգբատութեան շէնքին հիմնաքարը եղած էին :

Քարեկամներու օգնութեամբ միջնորդութեան ձեռնարկած էր , եւ մինչեւ մեր պատմութեան թուականէն տարի ու կէս երկու տարի առաջ՝ քիչ շատ ապրուստը կը ճարէր շնորհիւ այն աշխատութեան զոր կը մատուցանէր վաճառականի մը , որ քիչ վերջը Գրիգոր աղայի մէկ անանկութեան ամենէն կարեւոր զոհերէն մէկը պիտի ըլլար :

Բայց օր մը եկաւ որ պարտքեր ընել սկսաւ : Վերջը , պարտքերը վճարելու անկարողութիւն . տան վարձքի տաղտկալի դժուարութիւններ , աղջիկներուն կողմէ տեսակ տեսակ սրտաճկիկ զոհողութիւններ՝ իրենց բնակարանէն շնչելու եւ աւելի աժան՝ բայց անշուք տուն մը չունակելու համար :

Այս բնակատիրութիւնը մանաւանդ գործին չէր քար անդրանիկ աղջկանը , որուն միտքը եւ սիրտը Գրիգոր աղայի սրտայն , միւսիւ Արմենակին նկատմամբ շատ քնքոյշ երազներ կը գգուէին , եւ որ արդէն սկսած էր մեծամեծ յոյսեր տածել այն յաջողութեանէն ի վեր զոր ունեցած էին հրապարակի վրայ իր մէկ քանի նորաւէտներ , որոնք անշուշտ աղջկանութիւն մը պիտի գործէին չուսայի վաճառականին որդւոյն մտքին վրայ որ , ինքն ալ , նշանաւոր , գրեթէ անզուգահեռ վիպագրի համբաւ ունէր , պիտի տեսնենք թէ ինչպէս :

Այս ամէնուն առջեւ . թշուառ հօրը սիրտը կը մորմոքէր : Աղջիկներուն վիշտ չէր կրնար պատճառել , տունը չփոխեց :

Մնաց օր իր զրացիին բարեացակամութեան եւ ձեռնառութեան վրայ բաւական յոյս ունէր . եթէ շատ նեղը մնար , կարեւոր փոխառութեան մը կը դիմէր՝ պարտքերը վճարելու եւ փոքրիկ ձեռնարկներով տունը ապրեցնելու համար : Արաին ծայրայեղ բաւարարութիւնը այդ փոխառութեան պատահական անկարելիութիւնը կը վարագործէր իր աչքերէն . չէր կրնար մտքէն անցունել որ Գրիգոր աղան , որուն հետ զրացութեան եւ մտերմութեան աշխարհի սերտ աղերսներով կապուած էր , իրեն համար թեթեւ զոհարար մը փոխառութիւնը մերժէր , գումար զոր բաց աստի , մաս առ մաս վերստին պիտի ստանար : Մանաւանդ որ չուսայի վաճառականը իրեն նկատմամբ հաճոյակատար գտնուելու համար գերազանց պատճառ մը ունէր , ինչպէս քիչ մը վերջը պիտի տեսնենք :

* * *

Դեռ աստի աղջիկները կան որոնք տեսակ մը թռչուններ են : Անոնք քիչ կուտեն , շատ կերպեն : Քաղած ատենները կըսեն որ թեւերին պիտի բանան : Գլխու հակումներ , պարանոցի թեքումներ ունին , որոնք աղանիկ մը պարանոցին աղւաթեւարային շարժումները կը յիշեցնեն : Եթէ ձայն հանեն , քեզի կը պատասխանեն արժաթի երաժշտութեամբ մը , որմէ զոհ կը մնաս :

Ամենայեւթին աղքատութեան մէջ իսկ , մաքրապաշտ զուարթութիւն մը անոնց հիքութիւնը կը պարտաւէ , եւ արցունքի տեղ ժպիտ մը տեսնելով՝ լալը կուգայ :

Անոնց հոգին թեթեւ է , խունկի նման : Անոնց գէճը , բոսորավառ վարդ մը՝ ճերմակ վարդի լայն թափանջող թերթի մը ետեւէն գալարուած : Կը կարծես որ երկինքի լեզուը անոնց աչքերուն մէջ կախկիթէ , եւ քեզի երբ նային , զովութիւն մը կը տա՛ն կայնէ բովանդակի էութիւնդ : Երբ սենեակիդ մէջ քային , վանդակի մը թիւերուն թրթրուումը կը կարծես լսել :

Հերմինէ ու Աստղիկ , Միհրանի աղջիկները , այդ տեսակէն աղջիկներ էին :

Մեծը , Հերմինէ , աւելի լուրջ քան Աստղիկը զոր անսպառ զուարթութիւն մը

կը լուսազարդէր, նմանք քիչ անգամ տեսնուած փափուկ եւ զգայուն հոգի մը ունէր :

Երկուշարթի առտու մըն էր : Սենեակին մէջ նստած, ասեղնագործի կը պարսպէին : Պատուհանին առջեւն էին :

— Օրիորդ Հերմինէ, հարցուց Աստղիկ, մեղո՞ւ ձայնով, զննող նայումով մը քրոջը երեսը նայելով եւ ձախ աչքը երկար ատեն քթթելով : Երէկ իրիկուն ինչո՞ւ չեկաք : «Ո՛ր էիք, Օրիորդ Հերմինէ :

Այս բառերուն վրայ, երկու մատաղ աղջիկները իրարու երես նայեցան, եւ քրքիչ բառնալով սկսան խնդալ յիմարի պէս : Բայց Հերմինէ, անմիջապէս ծիծաղը կտրելով, քրոջը տարապալման զուարթութիւնը մեղմով յանդիմանեց, իրենց հօրը վիճակը յիշեցնելով :

Իրողութիւնը սա էր որ իրենց գրացուհին, Գրիգոր աղայի հօրաքրոջ աղջիկը, յիսուն տարեկան ամուսին, նենգամիտ, չարամիտ եւ կեղծաւոր, երբ ուզէր իր խօսակիցէն բան մը իմանալ, կամ անոր միտքէն անցածը գուշակել, անոր երեսը կը նայէր չեչտակի եւ ժպտելով մը ու ձախ աչքին երկարատեւ քթթումով մը որ կը վարագուէր իր շար մտածումները : այսպէս, հոգիին մէկ պատուհանը կը փակէր ներսը եղած ազիտութիւնը ծածկելու համար, եւ միւսէն կը խուզարկէր ու կը գաղտագիտէր զիմացիին խորհուրդները եւ զիտումները :

Այս խողը քանի քանի անգամներ ըրած էր Հերմինէին, քիչ մը հոտը առած ըլլալով այն մանր մուկը լանքերուն զօրս ծաղկատի աղջիկը կընէր իրեն ազգական երիտասարդին հաճելի ըլլալու համար : Բան մը որ դժկամակութիւն եւ արհամարհանք կը պատճառէր Իզար հանրմին : Ի՛նչ, իր ազգականը, այնպիսի դիրքի տէր երիտասարդ մը անո՞ր մնացեր էր : «Վ գիտէ որ հարուստին աղջկանը բերնին պատառն էր ան :

Աղջիկը նախ աղչած էր այս տարօրինակ շարժումովն վրայ : Ետոյ, քրոջը եւ իրեն ցնծալից ծիծաղին նիւթ եղած էր ան, դեռաւոր աղջիկներուն միտքէն անգամ չանցնելով տարող քառորդ ժամեր տեւող այս վարպետորդի քթթումներուն չարիմաց հնարագիտութիւնը :

Ու հիմայ, Աստղիկ, ուզելով զուարճացնել իր քոյրը, կը ծեփեւայէր Իզար հանրմին աղանդակ նայումովը ու խօսումովը : Կը զգար, գիտէր որ Հերմինէ այնչափ զգայուն էր որ, հակառակ իր ամէնօրեայ բռնազրօսիկ եւ արուեստական ցնծութեանը, հպեւնու մաշելու վրայ էր իրենց նիւթական կացութեան պատճառաւ, մանուսնոյ այն անսովոր շարավառակութեամբ որով, ցերեկները ձեռքի գործով երկար ժամեր իրեն հետ աշխատելէ յետոյ, զիշերները, երբ ամէն մարդ պառկած էր, աղօտ կանթեղի մը լուսով գիր կը գրէր : Կարգացեր էր անոր գրածները եւ զմայլեր էր, կուրծքը՝ անոր կուրծքին տրոփունովը բարախելով :

Հերմինէի գրած փոքրիկ վէպերը իրականութեան կենդանի պատկերներէն եւ վերքերէն ուղղակի ընդօրինակուած էին : Հակառակ կեանքը քիչ ճանչնալուն—դեռ առանք ութ տարեկան էր միայն—, Հերմինէ տեսած էր :

Եւ իր գրուածները պատճառ եղած էին որ Արմենակ, քանի մը եւրոպական լեզուներու հմուտ, նախանձով զրգուէր եւ ինքքն ալ նորավէպեր գրելու ելլէր :

Այս վէպերուն առաջինները բոլորովին անյաջող փորձեր եղած էին, սրանց ինքն ալ չէր հաւնած :

Այն ատեն, տարօրինակ բան մը պատահած էր այս երիտասարդին մէջ :

Աղջիկէ մը վար մնալու նեղացուցիչ պարագան, վասն զի ինքը անկէ աւելի վարագացած միտք մը ունէր անշուշտ, իր քանին հանգարտութիւնը խռոված էր :

Եւրոպական քանի մը գրականութեանց ժամանակակից արտագրութիւններէն ճարպիկ քաղուածներ ընելու եղած էր, եւ, կտոր մը առցիկէ՛ն կտոր մը անգիկէն, միաքէ չանցած ծակ ու ծուկ տեղերէ հափափելով, զոգ կատուի մը պէս, իրենը չեղող երկերու ծընունդ տուած էր, ամէնամիծ ճարպիկութեամբ քաղելով եւ կցելով գանձք, ամբողջութիւն մը յօրինելով անանցմէ, բայց միշտ այնչափ ճարտարութեամբ՝ որ կարգ մը լեզուներու մէջ հրատարակուած օրական եւ պարբերական բոլոր հրատարակութեանց հե-

տեսող հզօր միաք մը միայն պիտի կրնար Արմենակի մարգարտներուն ազդիւրը ճանչնալ եւ անոր ճակտին զարեւել իր գողօնները :

Կը ստանար լազմաթիւ եւրօպական հանգստեան , շատ մեծ անուն չունեցող , եւ նոր երեսցած գիրքերու պաշար մը ունէր , որոնք իրեն զրաւագլուխը կը գայացնէին : Գիրքեր լազմ հարուստ բանագող գրագէտի ազնուականութեան մը հովը ունէր : Գրագէտ ըլլալու մենամուտութենէն բռնուած էր , ինչպէս որ կան մարդիկ որ գեղձանիկներ պահելու կամ աքաղաղի մենամարտներ սարքելու մենամուտութիւնը կուենան :

Աստիի վաճառականին որդին ալլէկ դիտէր որ Թէնի մը կամ Պրիւնթիէոի մը արգասեան աչքերը գոյութիւն չունէին , գտնէ առ այժմ , իր միջապային մէջ , եւ թէ կրնար իրեն համարու մը չինել համակ փոխառութեանց վրայ կառուցուած : Ո՛վ պիտի հասկնար գրուած այդչափ վէպերուն , նորա՝ վէպերուն եւ ուրիշ երկերուն խառն բազմութեանը մէջ , ո՛վ որի :

Եւ յետոյ , կը մտածէր , միթէ ամէնքն ալ բանագողներ չէի՞ն , Հոմերէն սկսեալ մինչեւ Լըքսէթ աը Լիլ , Արիստոփանէն սկսեալ մինչեւ Կի տը Մոլստան : Իսկատիւ ճշմարիտ տխարը բնութիւնը ու մարդկութիւնը չէի՞ն : Մէկը առաջին անգամ տեսած էր եւ արտայայտած , ուրիշներ , անոր հետեւելով , նոյն բանը ըրած էին :

Ահա այս օրինակի հանճարամտութիւններով հասած էր հանգստաւէտ եզրակացութեան մը , որով իր խղճին հաշիւները կարգադրելու դիւրին ճամբան գտած էր . ճիշդ ինչպէս որ , զարմանալի՝ անվրիպութիւն որ երբեմն կրնայ պատահիլ ժառանգականութեան օրէնքին մէջ , հայրն ալ աւելի կամ պակաս աղտոտ աղբիւրներէ բխած հարստութեան մը մասին համարատու եղած էր ներքին մարդուն մէջ՝ զլուխին բարձրացնող մէկ աւելի հարցական նշաններու առջեւ :

Եւ Արմենակ , այս ուղղութեամբ յառաջանալով իր գտած շաղկին մէջ , վերջապէս հասած էր անքայլ աներկեւան վառահողթեան մը ինքն իր վրայ , մինչեւ որ կը հաստատար թէ իր համբաւին արժանի մեծ մարդ

մըն է , եւ մինչեւ անգամ երբեմն ինքնագոհութեան հառաչանքներ կուենար , որոնք կրնային թարգմանուիլ . « Փա՛ռք քեզ , Տէ՛ր » ճիշտ այնպէս ինչպէս որ հայրը , ամէն անգամ որ անգամ եւ պատժապարտ անանկութիւն մը անվտանգ ի գլուխ հանած եւ ուրիշներու գրականէն մեծագումար գողութիւններ յաջողցուցած էր , կը հեծէր գրեթէ արտառուայից սրտազեղութեամբ . « Փա՛ռք քեզ Տէ՛ր » :

Ինչ որ Արմենակին նեղութիւն կը պատճառէր , դրացի աղջկանը՝ գրեւոր գիւրուութիւնն էր : Աղլէկ գիւրէր որ անոր երկերը ինքնաբուխ ինքնագեղ էին . ճշմարիտ արուեստագէտ մը , ինչ որ ինքը յաւիտեան չպիտի կրնար ըլլալ :

Ասոր համար է որ դժկամակութեամբ կը տեսնէր անոր ամէն մէկ նոր նորագոյնը : Ի՞նչ , այդ պզտիկ աղջկը , այդ չըջագգեստը ունէ՛ր այն բանը , նուիրական կրակը , զոր ինքը երբեք չպիտի՝ ունենար :

Ու ամէն անգամուն աւելի կը զգուշանար զայն տեսնելէ — երեք ամիսէ ի վեր իրիկունը պարտէզը ոտք չէր կոխած — հաւանութեան կամ զմայլման յայտնութիւն մը ընելու կոկիծեցուցիչ հարկէն խոյս տալու համար :

Եւ Հերմինէ բնաւ չէր կասկածեր որ իր դրացիին աչքը մտնելու համար իրեն թափած քանքերը , նորանոր գրուածները զորս հրատարակութեան կուտար , խոտոր կը համեմատէին այն յառաջդիմութեան հետ զոր կը կարծէր ընել Արմենակի միաքին ու սրտին մէջ :

Սրտի վերաբերեալ բաներու գալով , ճրչմարիտ սկեպտիկեան մը՝ առեւտրականին որդին : Ինչպէս որ բնութեան մէջ գեղեցիկին եւ սրտայոյզին զգացումը չէր տրոփած լանջքին տակ , այնպէս ալ սիրտը բնաւ բան մը չէր բաց իրեն դեռահասակ էակի մը սրտագրաւ նայուածքին առջեւ , Կալամիի ներքին տեսրեւներուն պէս անբիծ եւ աճառու խորշխորչանքներով անուշաբոյր շփակի մը կամ չըջագգեստի մը չընկեր երբ լսէր , Արմենակ բանի մը շարժիլը չէր զգար կուրծքին տակ : Իր դիւրին յաղթանակը զինքը համօրէն մտաւ առջ ըրած էր : Մեծ վիպագրի համբաւը զինքը

կը մոլորեցնէր : Նիւթապաշտ մը՝ համբաւա-
տեանը մենամուտով մը բարդուած :

* *

Այն տարին կարեւոր մը եղաւ :

Միհրանի գործերը հետզհետէ աւելի վատ-
թարացած էին :

Աղջիկները զոր կը պաշտէր՝ յաւիտեան
մեկնած մօր մը խանաղատանքն ալ բար-
դեղով իրենին վրայ : Խիստ , շատ Խիստ
էին :

Իրիկուն մը անօթի պառկած էին :

Իր կօշիկները ծակած էին անկարկառելի
կերպով , եւ ցուրտը միտին հասած էր : Ոտ-
քերը սկսած էին ցաւիլ : Կօշիկ գնելու դրամ
չունէր :

Ալ ժամանակը եկած կարծեց առաջադրած
դիմումը ընելու իր գրացիին մօտ :

Այս դիմումը անոր համար աւելի դիւրին
կը թուէր իրեն՝ վասնզի Գրիգոր աղայի իրեն
նկատմամբ ցոյց տուած բնականութիւնը առանց
պատճառի չէր : Գրիգոր աղան ալ , ինքն ալ
գիտէին որ կատարուած կեղծ անանկութեանց
վերջինը անուղղակի պատճառ եղած էր իրեն ,
Միհրանին , գործերուն վարձարացմանը եւ
աւերմանը . Միհրան այդ անանկութեան զոհե-
րէն մէկուն գործերուն մէջ էր , եւ այդ մար-
դուն գործը գոցուած էր :

Բայց դեռատի աղջիկներուն հայրը , որ
չափազանց ազնիւ եւ անմահի հոգի ունէր ,
ինչպէս տեսանք , այս մասին մինչեւ հիմայ
անոր բան մը ըսած կամ հետուէ հետու ան-
գամ հասկցուցած չէր : Երկու գրացիներուն
մէջտեղ խուլ եւ չխոստովանուած գիտակցու-
թիւն մըն էր այս , եւ լսին պայմանադրու-
թիւն մը կը հաշուեկշռէր այդ շահուէշներ ,
այսինքն , Միհրան՝ Գրիգոր աղային բան մը
չպիտի կրնար յիշեցնել , եւ չօխայի վաճա-
ռականն ալ սղատունակուն բարեացակամու-
թեամբ մը պիտի վարձատրէր անցած գացած
բանի մը վրայ անոր պահած լուսթիւնը :

Առտու մը , նաւամատուցի սրճարանին
մէջ Գրիգոր աղային ցած ձայնով պատմեց իր
անհանդուրժելի նեղութիւնը եւ առաջարկու-
թիւնը բանաձեւեց վախկոտ կերպով մը , դու-
ղալով :

Գրիգոր աղան անոր երեսը նայեցաւ այն-
պիսի թթուած նայուածքով մը որ քիչ մնաց
Միհրան շանթաւար պիտի ըլլար , եւ պատաս-
խանին մէջէն սա բառերը լսեցին քիչ մը ան-
դին նստած քանի մը հոգիներ . « Սեկքիօդ
եկեր է : »

* *

Երկու քոյրերը կը քնանային նոյն անկու-
ղինին մէջ , աղքատիկ զրկուած աղու յոգ-
նած քունով , ճոխ մազերնին ամփոփած ,
ծանր շնչառութիւն մը ուռեցնելով ծոցերնին :

Աստղիկ ալ բազուկը քրօջը սուսին վրայ
նետած էր . կ'երեսի թէ , իրենց վերջին անձ-
կութեան մէջ անոր վրայ նշմարած ծանրա-
հոգ մտաւորութիւնները փարատելու հա-
մար , վերջին զուարթ բառով մը հալածած
էր զայն , եւ այսպէս քուններնին տարած էր :

Երկար թարթիչները , ցայգականթեղի մը
լոյսին առջեւ , կ'երկարաձգուէին քիչ մը
դժգոյն դէմքերնուն վրայ :

Միհրան մօտեցաւ անոնց անկողնին , մատ-
ներուն վրայ քալելով :

Նայեցաւ անգամ մը աղջիկներուն վրայ ,
եւ գուրս ելաւ , կտրծքը պայթելու մօտ :

Խեղճ հայրը հաստատուն կերպով որոշում
տուած էր վերջ տալու իր կեանքին : Ալ հե-
րիք տառապած էր : Աղջիկները մինակ թու-
ղելուն համար սիրտէն արիւն կ'երթար . բայց
երբ յիշած էր ձեռնուան ձիւնը որ ոտքերուն
ուկրներուն մինչեւ ծուծը թափանցած էր ,
զառակներուն անօթի անցուցած գիշերները ,
առաւօտները որ ահաւելի մահուան մը պատ-
րաստութիւնն էին , մարդերը որ զինքը հեզ-
նող կ'երեսային այլ եւս , ամենքն ալ , ան-
յաղթելի սարսափ մը եկած էր վրան :

Իր գրացիին մերժումէն վերջը , բան մը
վար ինկած էր մտքին մէջ , զսպանակի մը
պէս որ կը կտարի : Ուրեմն այն մարդը , որ
իրեն բարեկամութիւն ցոյց կուտար , իրեն
հետ կը զրօնե՞ր միայն , եւ այս ամէնը ժա-
մանակ անցունելու համար էր . եւ ինքը
մեռնէր ալ իրեններով , հոգը չպիտի՞ ընէր :
Բարեկամութիւն , սէր , ուրեմն միայն բառե՞ր
էին ասոնք : Եւ ինքը որ այդ խորդափ , այդ
անխիղճ մարդուն երեսպաշտութիւն ըրած

էր, կարծելով որ օր մը աղջիկներուն օգտակար կ'ըլլայ ասով: Այս գաղափարը սիրտը կը ճմլէր: Կարծեցեալ բարեկամին ժամոտ գէմքը այն պահուն ուր անոր աջակցութիւնը խնդրեց իր վշին եղբրքին վրայ, կապարէ մղձաւանջի մը նման կը խեղդէր իր էութիւնը:

Կը դեղեւէր, իրրեւ գնդակով մը սրտէն զտրուած: Նայուածքի, լեզուի վէրքեր կան որ չեն բուժուիր: Որոշած էր:

Գիւղին մէջ եւ մօտակայ գիւղերը այցելութիւններ տուած էր մարդերու եւ իրերու:

Գնաց այն տեղերը որոնք մանկութիւնը կը յիշեցնէին իրեն. դպրոցը, եկեղեցին, ատենօք բնակուած տունը մը: Անոնց մէջ ապրած էր ժամանակ մը, երբ սիրելիները՝ դեռ հաս էին:

Տեսաւ, բարձունքին վրայ, պարտէզի մը մէջ հովանոց մը որ կը բարձրանար, — երջանկաւէտ վայր, ուր մօրը կենդանութեանը հօրը հետ, ամուսնոյն ողջ եղած ատենը՝ ամուսնոյն եւ մատաղ գաւակներուն հետ, քանիցս բարի եւ երջանիկ հօր ուրախութիւնը վայելած էր, հօն վերը, կապոյտին մօտ, բարձրէն զխտելով Վստփոյի ակնհամայ կապոյտին վրայէն սահող մեծ ու պզտի շոգեւորներուն, նաւակներուն երթեւեկը, եւ հեռուն, գլխացքը, երկնային բոսորաւառահազին ժայռերու կամ նարնջագոյն լիճերու մէջ ծանր ծանր վար սուզող հրեղէն հսկայ աչքը:

Յետոյ ամուսնոյն ընտանիքին ամեն առջեւէն անցաւ. հիմայ կէս փլած, իր մտքին պէս: Այդ կիսուէր շէնքը գերեզման կը բուրէր: Անցաւ անոր առջեւէն, ինչպէս որ քանի քանի անգամ անցած էր երրեմն եւ դարձեալ անցած՝ պատահանին վարագոյրներուն սպիտակութեան մէջ փայլող խարտեալ գլուխ մը տեսնելու համար:

Տաներիւ տարեկան եղած ժամանակը, օր մը, անմեղ անտառի տղու զրօսանք մը բրած էր, ծովեղբրքը տեղ տեղ նաւակներու կայարանի մուտքերուն վրայ դրուած կամօղակներուն վրայէն, խաղալու համար, վազած էր՝ մօրմէն եւ իրեններէն զատուելով, մայրը դող եղած էր: Իրիկունը տունը խիստ, շատ խիստ կշտամբանք լսեր էր,

այնչափ որ արիւնը գլուխը ցատկեր եւ հիւանդացեր էր: Այդ կամօղակներուն վրայէն անցաւ, եւ տեսաւ որ տախտակները նոյնն էին, շատ մտշած:

Ու հիմայ, դարձեալ հոն կերթար: Ծառ կանխազարթոյց աքաղաղի մը հեռաւոր նուազ ձայնը ակաջին հասաւ: Էջ մը, շատ հեռուն, գոնէն բարձրացուց, հազիւ լսելի, որ խոյն մարեցաւ:

Երկինք նայեցաւ. պտղ էր: Իր ճակատը խարոյկի նման կ'այրէր: Վերջին անգամ մըն ալ նայեցաւ ծովեղբրքէն դէպ ի ցամաք: Գիւղը կը քնանար: Դարատափէ դարատափ տեղ տեղ մինչեւ վերը բարձրացած բնակութիւններ, ծառերու ուրուականակերպ ստուերներով չըջացաւ, վաղնջուց աշխարհի մը հնութենէ սեւցած տունները երեւցան իրեն, որոնց մէջ երկար, երկար դարերէ ի վեր մարդ չէր մնացած, ու դատարկ էին: Մարդկութիւնը կը խոտափէր իրմէ:

Ձաւակներուն քնացած կողմը նայեցաւ, սիրտը բան մը չըսաւ իրեն: Կեանքին վախը խելքը գլխէն ատեր էր:

Իր յուսահատութիւնը, հսկայ պատի մը պէս, բարձրացեր էր հիմայ իրեն եւ աշխարհի միջեւ, զօր չէր տեսներ ալ եւ զոր կը գուշակէր միայն:

Մշուշի մէջ էր: Աւելի գացողներուն մօտ էր քան կենդանի աշխարհին: Քայլ մը միայն:

Երկինք նայեցաւ: Կարծեց թէ հազարաւոր աչքեր իրեն վրայ սեւեռուած էին ու զինքը կը կանչէին: Ձեռքը սրտին տարաւ. դեռ ողջ էր: Երկինքին հայրենաբաղձութիւնը ունեցաւ:

Առաւօտ էր:

Ծովեղբրքէն քար մը տաւ, ծանր: Ձուան մը տուած էր հետը, խեղճ կտոր՝ լաթ շորցունելու չուանի մը, որմէ կը կախուէին յաճախ իր եւ գաւակներուն ձորձերը քարը սոքին կապեց: Երկու քայլ պիտի ընէր:

Վախցաւ. մոռցած էր ծանրութիւնը ծովեղբրքին շատ մօտ տանելու... չէր կրնար տեղափոխուիլ. չուանը կարճ էր: Ծակտատալի՞ր թէ զուգադիպութիւն...:

Վայրկեան մը, սարսուռի պէս բան մը

ունեցաւ : Դողաց : Չուանը քակելով տուն
երթալու գողափարը կայծակի արագութեամբ
անցաւ ուղեղին մէջէն . աչքերը փակեց ,
չտեսնելու համար :

Գրիգոր աղային վերջին կծու հայրամարտ
մտքին առջեւ բերաւ : Մեծ ճիգ մը ընելով՝
ծռեցաւ , եւ քարը վերցնելով , անդունդի մը
եզերքէն քաղող քնաշրջիկի մը անդիտելու
թեամբ քանի մը քայլ բրաւ , եւ ինկաւ
ծովուն մէջ :

* * *

Նաւակներու կայաններէն մէկուն մէջ
կանուխ արթնցած ձկնորս մը ճողրիւնը լսե-
ր . դուրս ելած էր տեսնելու համար : Ծու-
վեզերքէն հայեր եւ , այգուն միմեջաւ նշոյ-
լին ցոլացումովը , մահուան դէմ մաքառող
մարդու մը ճիգերը նշմարած էր :

Դիակը հանեցին :

* * *

Երկու օր վերջը , առաւօտուն , Գրիգոր
աղային մէկ երիտասարդ դրացին , հաւամա-
տոյցի սրճարանին տոջէն անցած ասեմը ,
տեսաւ որ չուխայի վաճառականը , նարկի-
լի փողին սաթը բերանը , մէկուն հետ
եռանդով նարտ կը խաղար , պօռալով կան-
չելով , մինչդեռ ուրիշներ կը խնդային :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՔԵԱՆ

«ՄԱՍԻՍ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խարբերդի մէջ , Մասիսի գործակալու-
թիւնը ստանձնած է Կ. Մ. Յովսէփ Էֆ.
(Խարբերդ-Հիւսէյնիկ) :

Սիվրիհիսարի մէջ , ուր նախորդ երկու
չըջաններուն գործակալութիւն չունէինք ,
ներկայ տարեչըջանին համար Մասիսի գոր-
ծակալութիւնը ստանձնած է Յարութիւն Էֆ.
Հէլվաճեան :

Այդ երկու քաղաքներուն մէջ Մասիսի
բաժանորդագրուիլ կամ իրենց բաժանորդա-
գրութիւնը նորոգել ուղեղները կը հրաւիրենք
զիսեւ յիշեալ էֆէնիներուն :

ԿԷՍ - ԲԺՇԿԱԿԱՆ

1902Ի ԿԱՂԱՆԴՁԷՔԸ

Բժշկական աշխարհին համար՝ վերջացող
տարիին էն նշանաւոր գործը կրնայ համար-
ուիլ Լոնտոնի մէջ գումարուած հիւժախտի
կամ թոքախտի միջազգային Համաժողովը :
Նոր տարին ալ փառաւոր սկզբնաւորութիւն
մը ունեցաւ , կրնայ ըսուիլ , նոյն տեսակէտէն ,
քանի որ բարեսէր հարուստ անձ մը խոշոր
գումար մը — 200,000 անգլ. ֆունտ —
գրած է Անգլիոյ թագաւորին տրամադրու-
թեանը տակ , որ պիտի գործածուի մարդա-
սիրական եւ օգտակար նպատակներու : Ու
բժշկութեան համար ուրախադէպ պարագայ
մըն է անտարակոյս որ էտուրտ թագաւորը՝
«մարդասիրական ու օգտակար նպատակ»ի
նախնաւոր այդ գումարը առանց վարանելու
կը յատկացնէ թոքախտի ապաքինարանի մը
կամ հիւանդարանի մը կառուցումին :

Աչքիս առջեւ ունիմ շրջաբերականը որ
հրաւէր կը կարգայ ամբողջ աշխարհի բժիշկ-
ներուն՝ ներկայացնել այդ կառուցուելիք
ապաքինարանին համար լաւագոյն թելադ-
րութիւններն ու յատկազօրեմքերը : Եւ որպէս
զի փոխադրուած կատարելութիւններով օժ-
տուած բաներ մը ըլլան ներկայացուած ծրա-
դիրները , առաջին քայլէն իսկ ութը հարիւր
սակի միջանակ մը կ'որոշուի այդ նպատակին
համար : Ուստի՝ տարակոյս չի մնար երեւք
թէ քանի մը ամիսէն աշխարհի զանազան
կողմերէ Լոնտոն թափող թելադրութիւննե-
րու մէջէն լաւագոյններուն բնորոշութեամբ
Անգլիոյ պիտի կարենայ պարծիլ թոքախտի
Ապաքինարանի լաւագոյն ու էն կատարեալ
հաստատութեամբը ,

Բայց եթէ լոկ Անգլիոյ ըլլար այդ նու-
րաստութեանէն օգտուողը՝ անհրաժեշտ պէտք
մը չի կար որ այդ լուրը արձագանգ գտնէր
Մասիսի մէջ : Այդ ապաքինարանին համար
նշանակուած Յանձնաժողովը իր բնարութիւ-
նով եւ որոշումով պիտի վճռէ թէ ո՞րն է
այդ հիւանդութեան դարմանումին յարմա-
րագոյն ու լաւագոյն եղանակը : Ու ասի

առարկայական դաս մը , օրինակ մը պիտի ըլլայ ամբողջ աշխարհի , որմէ էւել կամ պակաս պիտի կրնայ անշուշտ օգտուիլ ո՛ր եւ է հասարակութիւն , պայմանով հարկաւ որ 200 000 անգլիական կամ օսմանեան ոսկիի մնացող նախատեսութեան մը ընթերցում խաղէս ու իրապէս ծայր տարայդ հասարակութեան օրաթերթերուն մէջ :

Առաջադրուած Ապաքինարանը պիտի ըլլայ արագոր հաստատութիւն մը , միայն հարիւր անկողիննոց հիւանդանոց մը , որ առանց խտրի պիտի հիւրընկալէ թէ՛ աղքատ եւ թէ՛ հարուստ թոքախտաւորներ , Վերջինները , հարկ չի կայ ըսելու , պիտի վայելեն կարգ մը առաւելութիւններ կամ ըսենք՝ զեղխտութիւններ , քանի որ վճարող եւ լիալի վճարողներ պիտի ըլլան իրենք : Երկու դասակարգերն ալ սակայն հաւաստարապէս պիտի վայելեն ինչ որ անհրաժեշտ է դարմանումի ու ապաքինումի համար : Երջարեւականին մէջ ըսուած է , օրինակի համար , թէ ամէն հիւանդ պիտի ունենայ իրեն առանձին սենեակը , իսկ հարստ հիւանդները պիտի ունենան մէկէ աւելի սենեակ , իրենց վճարելիք դրամին համեմատ : Դարմանումի բնդհանուր եւ էական պայմանները անփոփոխ են ո՛ր եւ է հիւանդի համար :

Եւ այս կերպով կը յուսացուի որ թոքախտի դարմանումի հին ու նոր կերպերուն մէջէ լաւագոյնները ընտրելով՝ նոր կուսանի մը վրայ դրուի այդ իրաւամբ ահարեկիչ հիւանդութեան բժշկութիւնը :

Երջարեւականին պարունակութիւնը ըսելէ այն կը շեշտէ նաեւ ինչ որ արդէն այլեւս ընդունուած բան մըն է , թէ թոքախտաւորին ապաքինումին համար կենսական է փնտռել ու գտնել նպաստաւոր միջավայր մը : Սովորական ընթերցող մը պիտի գարմանայ թերեւս թէ ինչո՞ւ համար այդ մրցանակը , կամ այդ պատահանքի գումարին մէկ մասը չի խոստացուիր թոքախտին դեղը գտնողին : Պատասխանը պարզ է . — վասն զի թէ եւ դեղը գտանք ըսողներ շատ եղան մինչեւ այս օր , բայց գիտութիւնը շատ հաւատք չունի

թէ կարելի է մասնաւոր դեղ մը գտնել թոքախտի : Ու եթէ առանկ նշանաւոր դեղ մը գտնուի իսկ , տակաւին առաջին տեղը պիտի ըսնէ հիւանդին խնամքը , ու մասնաւոր միջավայրը :

Կ'արժէ ծանրանալ այս կէտին վրայ : Մաքուր ու առատ օդ , առաքիկ աչքան ու օմեղան՝ թոքախտի դարմանումին մէջ : Աւելի մարդ հարկաւ կընդունի այս ու այն մասնաւոր դեղերու մասնաւոր օգուտները , բայց ճշմարտութիւնը , իւրիշէ կ'ուզէք , «տխուր ճշմարտութիւնը» սա է թէ մարդկութեան պատահաւոր համարուած այս թոքախտին համար բացարձակ դեղ մը անձանօթ է դեռ բժշկութեան : Եւ ինչ որ քաջածանօթ է , առէ թէ՛ օդ եւ լոյս , առտուածային այդ ձրի պարգեւները անհունապէս աւելի ազդեւորէն կը մաքախտի թոքախտի չարածճի մանրէներուն դէմ քան այն հազար ու մէկ տեսակ սուղ ու պիտակուած հրաշագործ դեղերու սրտակները :

Ապագան միայն պիտի կարենայ պարզել թէ ի՞նչքան մեծ դեր մը պիտի կատարէ այս արքայական ապաքինարանը , զոր ես քիչ մը չափազանց լաւատեսութեամբ կը համարեմ : Կիմ կոչել 1902 թ Կալանդէքը՝ մարդկութեան :

ՅՈՒԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

ՄԱՍԻՍԻ յաջորդ թիւով պիտի հրատարակենք ընդարձակ Նորապէս մը Շ ՇԱԽԱՐՇԷ , — որուն գրական գեղեցիկ գրուածքները հանդիմով կարդացուած են միշտ Արեւելի ու Մասիսի մէջ :

Նոյնպէս յաջորդ թիւին կը վերապահենք 1901-1902 թ Գրական Տեսութեան (Ս. Ա. Ն. ԳԵՂԵԱՍԹ) երկրորդ մասը :

Մ Ո Ռ Ա Յ Օ Ն Ք

(ԿՈՐՄՈՒՄ...)

Ծաղիկներու , կոյս-անհառի սիրահար՝
Վախկոս քայլեր ուղղեցի այդ իրիկուն
Այն ծառերուն տակ որոնց մէջ դեռ բախուն
Խոռոք լուսնակ մը կը փայլէր գերք գոհար՝
Լըռիկ ու սրժողոյն :

Նըկարչագեղ անկիւն մըն էր հանդարտ ուր՝
Խոր բսուերի մը մէջ բաղուած էս անխօս ,
Կուրծքս՝ կոհակ , հոգիս՝ քրքռում , գանկըս՝ փոս
Կը հեւայի դառն հեշտանքի մ'անձնասուր՝
Զերդ տերեւ մը գօս :

Արեւ մ'անցաւ անապատէն իմ սրբիս
Երբ յիշատակ մ'այրեց , վառեց իմ նակատ...
Վերջուեումի ցոլք մ'ունեին սրբակաթ
Հող՝ ծառ ու բուփ , ծաղիկ , զեփիւռ , շող չորսդիս՝
Նըրբին ու անգայտ :

* * *

Անոր անունը կու տային տերեւներ
Իրենց փափուկ համերգին մէջ , վա՛րդ անուն .
Հող կուգար ան՝ երբ իրիկունը կիջներ ,
Միշտ առանձին , առանձին ինք ու անհուն... :

Եւ իրարու կը նայէին դալիանար
Երկուքն ալ մուր , խորհուրդ , զաղտնիք , տարամ , սե՛ւ...
Ես իմ խորեւս կը դիտէի նախ գոհարն
Ապա երկնից խօլ լըռութիւն մը տատաւ :

* * *

Այսօր քափուր էր մեծասանն այդ աղջկան .
Հոն ուր նըսած լո՛ւռ ու սքիւրիկ կը կարդար՝
Ոչ ոք կայ . վարդ , տերեւ , զեփիւռ ա՛լ չըկան
Ու մոռցուած իր յիշատակն ալ արդար... :

Բայց մըսքիս մէջ , բուրասանի մը մէջ լայն
Հուր խոհերու , երազանքի , պրօնումի ,
Պահած եմ՝ իր խոր նայումներն որ կու լան
Ու սրբիս մէջ՝ իր վայրկեաններ քօշումի... :

Մ. ՌԻԴՈՒՐԼԵԱՆ



ՆԵՐՇՆՁՈՒՄԸ

Խորագիրը ինքնարերաբար հինաուսաց նապի մը կը մարմնաւորէ մտքիդ մէջ, բոկոտն եւ հերարձակ, պճղնաւոր պարեպոտով, լուրջ ու անմպիտ : Այդ տեսանկարը, սակայն, հրապոյրներ կը ցանցնէ իր խորհրդաւոր անձնաւորութենէն, ու իր լոց աչքերուն սլաքները որ մերթ կապոյտին խորը կը մխրձին եւ մերթ հագիդ կը խորաքննեն՝ կը դիւթեն զքեզ : Կը զգաս թէ անտեսանելի զօրութիւն մը կը ծաւալի շուրջդ եւ կը զրաւէ զքեզ :

Մտքի նայն վարմանքը պիտի բռնէր զքեզ, եթէ հանդիսատես ըլլայիր Ռաֆայէլի մը լուսաւոր յափշտակութեան մէկ վայրկեանին, երբ նա իր հայեցողութեանը մէջ մտաւայլ, իր իաէալին առջեւ հոգիացած՝ կոտնցուցած կը թուի իրականութեան զգացումը :

Կամ ինչպէս բացատրել մտքի այն պայծառ եւ բարձրաթիւղ տաւառնումները Նեւտոնի, յաճախ ողբերգական միջադէպերով խառն, երբ նա անհուն արեգեքի մը բարձրագոյն հաշիւներուն մէջ կը խորատուգուէր : Ահա՛ յուզիչ պարագայ մը իր կեանքէն : —

«Տահաւին թիւ մը, միակ թիւ մը հարկաւոր էր իրեն, որ մտգական բանալին պիտի ըլլար պարզելու իր առջեւ աննզր երկինքներու զարմանահրաշ գազտնիքները : անո՛վ պիտի ճանչնար եւ չափէր այն զօրութիւնը որ անթիւ աշխարհներ կը թոցրնէ եթերին մէջ, պակուցիչ արագութեամբ եւ լուրջեամբ : Բոյց տարակոյտը չըջեց յանկարծ իր համուզումը : Հզօր գիտունը զգաց որ կ'ուժաթափի, իր զօղոջուն ձեռքերը անկարող էին դժեշտութիւ մը : Գրիչը կարկառեց բարեկամի մը որ պարտաւորուեցաւ աւարտել այդ հաշիւը : Երեւակայեցէ՛ք թէ ինչ անձկութեան մէջ Նեւտոն յառեց իր աչքերը բարեկամին դէմքին վրայ, ու դեռ այդ հրաշալի թիւը չարտաբերած, ապահովագէտ կարգաց զայն հոն» ⁽¹⁾ :

Անխաբի, ներշնչեալ են, կ'ըսենք, հա-

ւատքի, արուեստի եւ գիտութեան այդ վարպետներուն համար : Ներշնչումը, յստայամ, ո՛չ ատարկաներու սրոշ շարք մը, եւ ոչ իրեարու մէջ շօշափելի տարր մը կը նշանակէ, այլ մարդուն յատուկ ներքին ջերմութիւն մըն է այն, բուն յուզում մը, զանազանակ եւ յարաբերական :

Հիները իրենց ոգեպաշտիկ խմացումովը՝ աստուծոյ մը ներկայութիւնը կ'ենթադրէին աւիւնոտ, ներշնչեալ մարդուն մէջ — «Յսեբեցի, Հովբոս գրեց» — կ'ըսէ դիւցազներգութեան ներշնչողը : Ծա՛տ բնական մտածութիւն մըն էր այն՝ միաժամ ու մանուկ մարդուն համար, որ զխոփին անգիտակ կը մտար իր բնախօսութեան եւ իր հոգեբանութեան : Այսօր ալ որ մարդս գիտակցութեան զօրեղ թափ մը կը գնէ իր մտքի եւ սրտի շարժումներուն մէջ, հրաշալիին եւ խորհրդաւորին սէրը միշտ ուժգին կը խօսի սրտին խորը : Մարմինէն աւելի հոգին կը սիրէ գինովնալ, եւ ինչպէս զգայանքներուն գերազրգուծութիւնը ազեցաւոր արդիւնքներ կուտայ Փիլիքականին համար, հոգիին ծայրայեղ խանդոտութիւնը կամ գինովութիւնն ալ՝ երեւակայութեան սանձարձակ մարտնչութեան մատնուած՝ կը մահացնէ իմացականութիւնը :

Ո՛րն է, արեւմ, այն ճամբիւ, բարբարոս, աստուածային ներշնչումը որ յաւիտեական գաղափարականները կը շինէ, որ հոգեկան աշխարհէն անձանթ հեռանկարներ կը պարզէ մարդու աչքերուն, որ բնութեան եւ կեանքի խորհուրդները կը լուստարէ :

Մարդկային իրողութեանց մէջ լաւն ու թուին, բնականն ու արուեստականը այնքան սերտիւ իրարու հիւստած, չաղապարտած՝ դիւրաւ կ'ալլային, իրարու հետ կը շփթին, ու շատ անգամ ամէնէն կորովարի սրտեղծութիւնը, ամէնէն նուրբ եւ մանրահոգ թարթափումն անգամ կը ըլլակին, կը գեղեւի, կ'անճրկի վերջակէտ մը ցուցնելու եւ մատնանշելու անցումի սրոշ եզր մը լաւէն զէպ ի յոյն, տաւքինութենէն զէպ ի մոլութիւն : Յափշտակութեան (extase), մտեռանդութեան (exaltation) այդ երեւոյթն ալ իր տարօրինակութեամբը, իր տաճական տաւաւորութեամբը՝ իրաւա՛մը ոգի կամ գեւ մը

(1) P. Lacombe.

ենթադրել տուած է Պիթիա հարցուկին ու նմաններուն մէջ, որոնք մտաւոր խանգարումի բոլոր օխտանշանները կը ցուցակէին իրենց վրայ : Այսու ամենախիւ, խմացականութիւնը իր ամէնէն ազնիւ պաշտօնը կը կատարէ ճշմարիտ ներշնչեալին մէջ, եւ ընական կարողութիւնները գերազանց ուժգնութեամբ ու անթերի պայմաններով կը գործեն : Ուստի, յայտնի չիօթութեան մը մէջ էր Ազեքսանրայի Փիլոն՝ երբ կը գրէր. «Որպէս զի Աստուծոյ լոյսը վառի, պէտք է որ մարդունը մարի» : «Ես»ին գիտակցութեան այդ արողջական կորուստը՝ ցնորակոծ գուշակի մը (devin) կամ նոր պզտոտնական միտաբ փիլիսոփայի մը վրայ խորհիլ կու տայ մեզի : Բայց ո՛չ երբեք Սհովայի մարգարէներուն՝ որոնք իրենց պայծառ գիտակցութեամբ, իրենց խորունկ անկեղծութեամբ, իրենց իտէալին բարձրութեամբ, հոգեշնար՝ ներշնչումներու զգայուն, յաւիտեական էջեր թողուցին մեզի :

Խորհուած ասարկային համեմատ՝ գեղադրական, բարոյական եւ կրօնական ներշնչումներ կան, եւ այս ամէնուն մէջ Աստուծոյ շունչն է որ կ'ընդմտի եւ կ'ոգեւորէ : «Ոչ մէկը բանաստեղծ է, կ'ըսէ Կիկերոն, առանց աստուածային ներշնչումի» :

Ներշնչումը իրր հոգեբանական երեւոյթ՝ հոգեկան կարողութեանց միահամուռ ամբարձումը, վերելքն է, ուր երեւակայութիւնը կը սուրայ առանց սայթաքելու, զգացումը կը բացավառի, խմացականութիւնը կը լարուի՝ իր ծայրագոյն ընդլայնումին ու նրբութեանը հասնելով, եւ կամքը ուժգին կը գործէ : Ներշնչումին արտադրութիւնները ոչնչէ չեն, այլ նախընթաց աստեղծարարութիւններու եւ խոհրդածութիւններու շքեղ ու լուսազոյն արդիւնք՝ օժտուած գործարանատրութեան մը մէջ : Հոն, ըմբռնելու, վերլուծելու եւ համադրելու կարողութիւնները իրենց կատարելութեան կը հասնին, մտածութեան, յղացման ձեւը յանկարծական է, զօրեղ եւ տարածուն : Հետեւաբար, ներշնչումի հետք մը անգամ չի կրեր իր մէջ՝ ինչ որ գանկի գառանցանք մըն է, կամ ուղեգային գերազգրութիւն մը :

Ներշնչումը կ'ոգեւորէ մէկը յանկարծակի,

կամ երկար մտածականներէ վերջ, երբ մեծ ու գեղեցիկ գաղափարներ եւ զգացումներ կը լեցնեն զայն : Ա՛հ, այդ աստուածային վայրկեանները կը դղրդեն ամբողջ էութիւնդ, կը յագեն զայն մինչեւ իր գաղանածածակ ալքերուն մէջ : Ոսկիդ խորութիւնները որ սովորական ժամերուն անշարժ եւ լսին են իրր մահաքուն խաղաղութեան մը մէջ, բացառութեամբ այդ վսեմ պահուն, կը բացուին, կը պայծառանան եւ ներշնչումի հոսանքներ թանկ շատաչիւնով մինչեւ հոգիդ մակերեսը կ'ողողեն, անկէց դուրս թափելու համար գրիչին, վրձինին կամ քնարին միջոցաւ :

Թէպէտ եւ մարդիկ տարբեր աստիճանով ընդունակ են ներշնչումի եւ ընդհանրապէս անոնք որ վառ երեւակայութեան եւ խորունկ զգացման հետ ջղային խառնուածք մը ունին, սակայն ամէն մարդ՝ շատ կամ քիչ՝ ունի իր ներշնչեալ ժամերը, ապա թէ ոչ կեանքը անհանդուրժելի տափակութիւն մը պիտի ըլլար :

Բայց միթէ սխալ մըն է ըսել թէ գերազանցապէս մաքուր հոգիներու մենայնորհն է ան : Վասն զի, անոնք պզտորած չեն կեանքի բուն աղբերակը, անոնց համար բնութիւնը լի է խորհարգներով՝ անհուն գեղեցկութիւն ներով, որոնք կը տածեն ու կ'արտածեն կեանքը : Ամէն կողմէ բարին կը շնչեն, ամէն տեղ ներշնչում կը գտնեն, երկինքներու մէջ, Զուրի կաթիլի մը ու ծաղիկի մը թերթիկներուն մէջ :

Ներշնչումը բարութեան ընդունարանն է, կեանքի գործունէութեան սյուր, եւ անհրաժեշտ պոյման մը որ եւ իցէ գերմարդկային աշխատութեան :

Արմաշ

ՀԱՐՄԱԿ

ԲՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Էջմիածնի մեզ, Թաղէս եւ Բարթուղիմէոս Առաքելոյ աստիճն օրը, Ս. Հայրապետին ու Վանքին Միարանութեան ներկայութեանը, երաժշտական ու գրական երեկոյթ մը տեղի ունեցեր է Գէորգեան Ճեմարանին մէջ : Ն. Ս. Օժտիլներ ինք, բարձր աթոռի մը վրայ բազմած, յստակ ձայնով կարգացեր է իր հեղինակած մէկ տաղաշա-

փութիւնը, որով կը պատկերացնէ թաղէի եւ Սանգուիտ Կուսի Վանուց աննախանձելի վիճակը : Ն. Ս. Օծութիւնը, ինչպէս յայտնի է, միշտ հետամուտ է խորխում հին վանքերուն նորոգութեան :

Երախտագիտական ուղերձ մը մատուց Ս. Պատրիարք Հայրն ի Կայս. Պալատ, այն դրամական պարգեւին համար զոր Վեհ. Սուլթանը բարեհաճած էր շնորհել Պատրիարքարանի, Մնուեղի տօնին առթիւ :

Թիֆլիզէն կը հաղորդեն թէ Ս. Հայրապետը հոն պիտի երթայ՝ ձմեռն մնաղեալ մասը անցունելու, էջմիածնայ մէջ իրեն փոխանորդ կարգելով Թիֆլիզի նախորդ առաջնորդ Սուրէնեան Սրբազանը որ պիտի հսկէ Մայր Աթոսի գործերուն :

Մնուեղի տօնին առթիւ Ս. Պատրիարք Հայրը ազգ. պաշտօնական մարմիններու, եկեղեցական եւ աշխարհական դատին շնորհաւորութիւնները ընդունեց երկուշաբթի օրը Պատրիարքարանի մէջ : Վարչութեան կողմէ խօսեցաւ Տիգրան էֆ. Եւսուֆեան, որուն պատասխանեց Ն. Ամենապատուութիւնը լաւ նախօտութեամբ մը որ հակիրճ տեսութիւն մըն էր Պատրիարքարանի գործերուն եւ փ. զովներու աշխատութեանց վիճակին վրայ :

«Վարչութեան կրկին Ժողովները, Կրօնա. կան եւ Բաղտքական, — որոնց երկուքն ալ հետզհետէ անգամներ պահած են՝ դրժ. բողոք մահերով, — տօնուն կերպով աշխատած են, ըսաւ Ն. Սրբազնութիւնը, առանց փախչելու պաշտօնին յոգնութիւններէն : Ուստի կրկին շնորհակալութեան արժանի են : Տեսուչ Խորհուրդներէն՝ Ուսումնականը կատարեալ մրաշանութեամբ կ'աշխատի նոյնպէս հինգ տարիներէ ի վեր եւ ուրախակի է որ մեր կրթական գործին մէջ հիմայ տեսնուած արդիւնքը բաւական գոհացուցիչ է՝ բողոքատմամբ հինին : Տնտեսական ու Դատաւարական Խորհուրդները վերակազմուած եւ նոր տարրերով նորոգուած, կ'աշխատին, մանաւանդ Տնտեսականը որ հաշուական կարեւոր գործեր ունի իր սեղանին վրայ :»

Անցնելով Կեդր. Մատակի վիճակին, Ս. Պատրիարքը ըսաւ. — «Ցաւով ստիպուած եմ ըսելու, թէ Մատակը իրօք նեղ կացու-

թեան մը մէջ կը գտնուի : Ահագին պարտքեր կան հինէն մնացած, վճարումներ կան զորս Պատրիարքարանը ստանձնած է. առանց ո՛չ մէկը չկրնալ վճարելն զատ, առօրեայ ծախքերուն ալ անբաւական գարձած են հասոյթները : Ուստի կոչոււմ կրնեմ որ, ինչպէս ամէն առթիւ, ներկայ պարագային մէջ ալ ամէն հոյ անհատ ճանչնայ իր պարտականութիւնները եւ իր ազգին տան պէտքերը հոգայ :»

Ն. Սրբազնութիւնը խօսեցաւ նաեւ որդանոցներու նիւթական վիճակին եւ անոնց տեղ հաստատուելիք դատաւային արհեստանոցներուն կազմակերպութեան վրայ, յիշեց Կիլիկիայ Կաթողիկոսական ընտրութեան ելքը, եւ իր բանախօսութիւնը աւարտեց բարեմաղթութիւններ ընելով Վեհ. Սուլթանին արեւաշատութեանը համար, որոնց ձայնակցեցան բոլոր ներկաները :

Մնուեղի առթիւ Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական այցելութիւն տուին՝ դեսպանատանց ունեց թարգմանները, Յունաց Պատր. փոխանորդը, Հայ Հռոմէականաց Պատր. փոխանորդ Տ. Աւետիս արքեպիսկ. Արփիարեան, Բողոքականաց Ազգապետ Յակոբ էֆ. Պոյաճեան եւ ուրիշ ծանօթ անձնաւորութիւններ : Բողոքական ազգայիններէն Ն. Սրբազնութեան այցելեցին նաեւ, Պատրիարքարան, եւ սիրալիր ընդունելութիւն մը գտան Պետիկեան եւ Աստուսերեան պատուելիները, եւ Վահան էֆ Մատթէոսեան՝ իր ծերունազարդ հօր Յակոբ էֆ. Մատթէոսեանի կողմէ որ Մնուեղի տօնին առթիւ Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական այցելութեամբ ընդունած էր եւ տկարութեան պատճառաւ չէր կրցած անձամբ երթալ Պատրիարքարան :

Ս. Հայրապետին կողմէ Երեսնի երկուշաբթուայ բացման ներկայ գտնուեցին Տ. Յուսիկ եպիսկ. եւ Տ. Բագարատ Վրդ., որոնք այս առթիւ ներկայացուեցին Կովկասի կառավարչապետ իշխան Կայիյիին :

Գրիգոր Էֆ. Զօհրապ, ինչպէս անցեալ տարի, այս անգամ ալ Մնուեղի տօնին առթիւ 10 Փրանսական ոսկի նուիրած է Բերայի թաղային սնտուկին, աղքատ տղացիի գնուելու համար :

Յառաջ կ'իմանանք թէ ծանօթ բանասէր Յովն. էֆ. Գազանճեանի մայրը, բարի ու առաքինի կին մը, երկնորասեւ հիւանդութենէ մը ետքը իր մահկանացուն կնքեր է Եւդոկիոյ մէջ: Յուզարկաւորութիւնը կատարուեր է արժանաւոր չքով: Մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք մեր աշխատակցին ու բարեկամին՝ որ Կ. Պոլսէն նոր դարձած Եւդոկիա, առեւտրական գործերու բերմամբ, իր մայրը կորսնցունելու դժբաղդութիւնը ունեցաւ:

ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ⁽¹⁾

(CASSEL'S MAGAZINE)

— 000000 —

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ. — ԵՒԵԿՏԵՐԱԿԱՆ ԼՈՅՍԻ ԴՈՐ ԿԻՐԱՌՈՒՄԸ. — ԲԶԷԶԻՆ ՈՅԺԸ. — ԿԱՄԱԶԱԿ ԳՈՐԾԻ

Միացեալ Նահանգներու շոգեկառք արտադրող է'ն զլիաւոր բնկերութիւնը՝ մինչեւ հիմա նմանը չտեսնուած շոգեկառք մը հայթայթեց որուն մեքենաներուն ամբողջ ծանրութիւնը՝ 250,300 լիպրա, ամխակիր վալստիւն ծանրութիւնը՝ 391,400 լիպրա, եւ լոկ մղիչ անիւններուն ծանրութիւնը՝ 220,000 լիպրա կը կշռէ: Իսկ ամբողջ շոգեկառքը՝ 175 թօնօ ծանրութիւն ունի: Գլաններուն խրաքանչիւրը՝ 24 մատնաչափ արամագիծ ունի, կրակարանին ներքին արամագիծը՝ 132 մատնաչափ երկայնութիւն եւ 40¹/₄ մատնաչափ լայնութիւն ունի: Այս վիթխարի շոգեկառքը շինելու համար՝ 406 երկաթէ ձողեր գործածուած են: Փորձով ապացուցուեցաւ թէ այս վայրաշարժը մեծ դիրութեամբ կրնայ քաշել 4000 թօնօ տարողութիւն ունեցող կառայտմը մը: Այս հսկայ արտադրութիւնը՝

(1) Իզմիրէն, Մասխի համակրող անգլիագետ երիտասարդ մը, անգլիական հանդէսներէ քաղուածաբար գիտական նորութիւններ կը սկսի հաղորդել մեզ, որով զգալի բաց մը պիտի լցնեն օգտակարապէս: Առաջին անգամուան համար կը հրատարակենք իր Դիսական պատշաճիւնէր լուսաւով որ պիտի շարունակէ այս շարքը պարբերաբար, գիտական ուրիշ յօդուածներու հետ մեկտեղ

Ծ. Խ.

կրապէս Ի. դարու հրաշալիքներէն մէկը կրնայ նկատուիլ:

§ Ամերիկեան չաա մը երկաթուղիի բնկերութիւններ արգէն սկսած են ելեկտրական խաղարկիչ լոյս գործածել, տարօրինակ գործիքէ մը գործող ցայտեցնելով զայն, որով կարող կըլլան իրենց ճամբուն վրայ դեգերող ոչխարներուն հօտեր եւն. փախուստի դարձնել: Այս լոյսին գործածումէն առաջ՝ բնկերութիւնները ստիպուած էին ահագին գումարներ վճարել՝ արջառներու կոխտուածներուն փոխարէքը տուելու համար: Խուզարկիչ լոյսին միջոցաւ, մեքենավարը՝ 1500-2000 սոք հեռաւորութիւն ունեցող տարականները նշմարելու կարող կըլլայ: Լոյսը արտադրելու համար գործածուած բնածուխը (carbon) սուղ բան մը չէ: Մէկ քէնցինոյ ձող մը՝ 8 ժամ շարունակ կը վառի պէտք եղած ելեկտրական լոյսը արտադրելով:

§ Յրանաացի գիտնական մը ստուգած է թէ՛ ըզեզ մը՝ իր ծանրութեան 18 անգամը կշռող բեռ մը, թիթեղեայ թեթեւ կառքի մը մէջ դրուելով կրնայ քաշել: Այս համեմատութեամբ՝ մարդ մը պէտք է 2 թօնօ բեռ տանելու կարող ըլլայ:

§ Ամերիկացի բրօքէսոր մը՝ Պ. Էլմըր Կէյտս՝ «Կամաչափ» (Myergesthesiometer) անուն գործի մը հնարած է, որով կամքի կարողութիւնը կը գիտցուի եղեր: Փորձի ենթարկուելիք անձը՝ գործիքէն առկա չտան մը կը բռնէ եւ կը սկսի քաշել: Կամաց կամաց շուտը քակուիլ կը սկսի՝ ճախարակին թեթեւ օրորում մը տալով, մէկ ակնթարթի մէջ ¹/₅₀ ատորճան: Չուանին քակուիլը կը սկսի ծանրանալ: Փորձի ենթարկուող անձը՝ այս իրողութեան անտեղեակ՝ շարունակ կը քաշէ մինչեւ որ զգայ թէ ա'լ յոգնած է եւ անկարող գործողութիւնը շարունակելու: Այն ժամանակ չափական նորահար գրութեամբ մը՝ կը գիտցուի ենթարկուողին կամքի ճկունութիւնը կամ կորովը: Հնարիչը կ'ըսէ որ «եթէ մանկիկ մը իր ամենէն փոքր տարիքին սկսի «Կամաչափ»ին կիրառումով զրապիլ՝ երկտատարողութեանը ժամանակ կամքի կատարելով կորով մը ստացած պիտի ըլլայ: Բրօք. Էլմըր Կէյտս՝ ներկայ դարուս է'ն զարգացած երիտասարդ հոգեբաններէն է, այս պատճառով գիտական աշխարհը դեռ չաա բան կը սպասէ իրմէ:

Վ. Ա. Գ.

Արսօնսէր Կ. Ս. Ի. Թ. Ի. ՃԵԱՆ

Տարագրութիւն Գ. ՄԱՏԹԷՆՈՍԵԱՆ

Կ. Պոլս. Ֆինանսերէր Խոզուրու, Թիւ 27

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ

ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Քր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆՍՑ ՃԻՒՂ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼԻ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՎ**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրողը **ԶԵՐԾ** են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ **ՎՆԱՍԱԿԱՐ** դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տեօրեկոսթիւն

Կ. Պոլիս, Կալարա, Բահապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ:

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884ԻՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալարա, Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին ու մէն տեսակ շապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ:

Միայն Ֆրանսական, ու Անգլիական ընտիր տեսակ կերպաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը արամաղիր է ընդունիլ ու հատարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ:

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներով օձիք, թեւնոց, ֆլանել, գուլպայ, թաշկինակ, ոսկեղօծ կոճակներ, փողկապ, դրամապնակ, զմեկի «Զէֆիր»-ը, խողանակ, սանտր ու ամուշահոտութեանց լաւագոյն տեսակներ:

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ապրանքային ազնուութեան, յանձնարարութեան խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէտով վաճառելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն առեւերէն մէկն է:

ԴԻՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ

ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

ԱԻԵԼԻ ՔԱՆ 25000 ԲԱՌ, ՈՃ, ԵԻԱՅԼՆ

Այս Բառարանին երկրորդ տպագրութենէն Հաշարաւոր օրինակներու կարճ միջոցի մը մէջ վաճառումը ամենէն զօրաւոր ապացոյցն է գործին արժանեաց :

Մասնաւորապէս Փրանսերէն լեզուն ուսանողներուն համար պատրաստուած ըլլալով հանդերձ պիտանի եւ օգտակար է առհասարակ ամէն կարգի տնձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ, թուղթի եւ տպագրութեան մաքրութեամբ ու կազմի գեղեցկութեամբ հայերէն հրատարակութեանց ամենէն աժանը կոչուիլ :

Գին զօրաւոր քաղթօնէ կազմի 25 դր.

Գին ընտիր լաթակազմի 27 դր.

Կեդրոնաւեղին է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը, Ֆիննանըլար Էօգուսու, Կ. Պոլիս

Կը գտնուի ամէն գրավաճառաց քով :

ԲՐՈՑ. ՇԷՌՄԱՆ ԳԼԷՆՔԷԻ

ԿԻՆՆ ԻԲՐԵԻ ՕՐԻՈՐԳ

Թարգմանութիւն Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆԻ

430 էջ

Բնախօս-բժիշկը Հափահաս օրիորդաց ֆիզիքական եւ բարոյական զարգացումը ինքնակրթութեամբ կարելի ընելու համար պատրաստած է այս գիրքը, որ իր հայերէնի թարգմանութեամբը կոչուած է զգալի պակաս մը լեցնել մեր գրական հրապարակին բնախօսա-առողջապահական աշխատասիրութեանց ցանցառ չարքին մէջ :

ՅԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ Է ԱՅՍ ԳԻՐՔԸ ԱՄԷՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ

Կեդրոնաւեղին է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը, Ֆիննանըլար, Կ. Պոլիս

Կը գտնուի Կ. Պոլսոյ եւ գաւառաց ըստը գրավաճառներուն քով :

Թղթակազմ 10, Լաթակազմ 15, Ոսկեզօծ 20 դահեկան :